ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— ---------- 2025 թվականի №—-Ա

«ԱՅ-ՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ԱՅ-ՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԱՅ-ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի հոկտեմբերի 9-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու չորս հայտեր (այսուհետ՝ Հայտեր), որոնցով խնդրել է համաձայնություն տալ Ընկերության մասնակիցներ՝ Դանիել Ալֆրեդի Աբրահամյանի և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասի՝ յուրաքանչյուրն իրեն պատկանող 50 տոկոս բաժնեմասից 3,75 տոկոս բաժնեմասը նվիրատվությամբ Վահե Արտակի Հովհաննիսյանին հանձնելու, Դանիել Ալֆրեդի Աբրահամյանի և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասի՝ յուրաքանչյուրն իրեն պատկանող 46,25 տոկոս բաժնեմասից 1,85 տոկոս բաժնեմասը նվիրատվությամբ Վահե Արտակի Հովհաննիսյանին հանձնելու, Վահե Արտակի Հովհաննիսյանի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասի՝ իրեն պատկանող 11,2 տոկոս բաժնեմասից Դանիել Ալֆրեդի Աբրահամյանին և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանին համապատասխանաբար 5,6 տոկոս նվիրատվությամբ հանձնելու, Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասի՝ իրեն պատկանող 50 տոկոս բաժնեմասից 35 տոկոս բաժնեմասը Դանիել Ալֆրեդի Աբրահամյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքների կնքմանը (այսուհետ՝ Գործարքներ):

բ) Ընկերությունը Հայտերին կից ներկայացրել է նաև 2018 թվականի օգոստոսի 27-ին կնքված՝ Դանիել Ալֆրեդի Աբրահամյանի և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանի կողմից

յուրաքանչյուրն իրեն պատկանող 50 տոկոս բաժնեմասից 3,75 տոկոս բաժնեմասը Վահե Արտակի Հովհաննիսյանին նվիրատվությամբ հանձնելու մասին, 2019 թվականի հունվարի 30-ին կնքված՝ Դանիել Ալֆրեդի Աբրահամյանը և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանը յուրաքանչուրն իրեն պատկանող 46,25 տոկոս բաժնեմասից 1,85 տոկոս բաժնեմասը Վահե Արտակի Հովհաննիսյանին նվիրատվությամբ հանձնելու մասին, 2021 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ Վահե Արտակի Հովհաննիսյանին պատկանող 11,2 տոկոս բաժնեմասից Դանիել Ալֆրեդի Աբրահամյանին և Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանին համապատասխանաբար 5,6 տոկոս բաժնեմասը նվիրատվությամբ հանձնելու, 2022 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ Դավիթ Ալֆրեդի Աբրահամյանին պատկանող 50 տոկոս բաժնեմասից 35 տոկոս բաժնեմասը Դանիել Ալֆրեդի Աբրահամյանին նվիրատվությամբ հանձնելու մասին պայմանագրերը: Ընկերությունը միաժամանակ հայտնել է, որ հիշյալ Գործարքները կնքվել են առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության համապատասխան կարգավորումների չիմացության պատճառով՝ հայցելով Հանձնաժողովի ներողամտությունը,

գ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի №ՄՄ/34.2-Մ2-8/5875-2025 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի նոյեմբերի 17-ի №01/11.1/9620-2025 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում Հայտերի վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով նաև Հայտերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

դ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը: Պարզվել է նաև, որ Գործարքները Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել են Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ՝ 2018 թվականի օգոստոսի 27-ին, 2019 թվականի հունվարի 30-ին, 2021 թվականի նոյեմբերի 11-ին և 2022 թվականի ապրիլի 15-ին՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության,

ե) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 22-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի

հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի №ՄՄ/34.2-Մ2-8/5876-2025 գրությամբ,

զ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ Գործարքները կնքել է առանց Հանձնաժողովի համապատասխան համաձայնության առկայության, ուստի՝ կնքված Գործարքները Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առոչինչ (անվավեր) են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Հայտերով ներկայացված Գործարքներին:
2. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Ընդունել ի գիտություն, որ Հայտերում նշված՝ 2018 թվականի օգոստոսի 27-ին, 2019 թվականի հունվարի 30-ին, 2021 թվականի նոյեմբերի 11-ին և 2022 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ Ընկերության բաժնեմասերի օտարման վերաբերյալ Գործարքները դրանց կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առոչինչ (անվավեր) են:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
--- -------- 2025 թ.